

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1926, էջ 253)

ՃԾԸ.

Սուլթաններու քաղաքի վերոյիշեալ լուրջ դէպքերու պատմութեան ուրիշ աղբիւր մը կը ներկայանայ մեզ Ասկէրեանի հետեւեալ նամակը:

Ամենապատիւ և գերազանց չոր միտոյ
Ստեփաննոսի Բաբունապետի և Աբախոր մեծի

... Գերազանցաւ միտասայ Արհեպիսկոպոսին մերոյ խոնարհութեամբ զաջնի համբուրելով ողջոյն մատուցանեմ... Պատմի աստէն, թէ ի կոստանդնուպոլիս յաւուրս պայրամին եղեալ է խոտվութիւն բազում, սպանեալ են զսիւլէյման աղայ զուրացողն, որ իբրեւ երկրորդ արքայ տիրացեալ էր ի վերայ երկրին, և զհամախոհ նորա զխըզլար աղասըն և զեախուպ աղան ևս. այլ թէ վասն որոյ իրաց, այսպէս պատմեաց որդի աւէտ աղային ասվատուրն: Վասն կարի իմն զօրանալոյ սիւլէյման աղային, թիկունս ունենով զնա պօստանհիք, բազում յանդգնութիւն զործէին, լուեալ թէ ոմն յիւրեանց ի կալանս է յիսկուտար առ իշխանի տեղոյն, չոգան առնուլ բռնութեամբ. յընդգէմ դառնալ իշխանին, հարին վերաւորեցին չարաչար ի զլուխ զիշխանն: Որոյ զայրացեալ անհնարին ընդ յանդգնութիւն նոցա, թուլթ առաքէ լալագին առ շիխիսլամն, և նա առ թագաւորն երթեալ ամբաստան լինի, եթէ ոչ մի թագաւոր է ի քաղաքիս, այլ երեք, չարախօսելով զսիւլէյմանէն և զխըզլար աղասըն: Հրաման առաքէ թագաւորն, արքային զխըզլար աղասըն և զսիւլէյմանն սատակել: Յարհամարհել խըզլար աղասընի գհրամանն արքունի, սատակէ զնա թղթատարն և ապա զսիւլէյմանն. և զիւրիս նախուպ աղային քոյր էր սիւլէյմանին ուրացողի, զբռամբ ածեն և զեախուպ աղան, և սպանեալ զամենայն ինչս նորա առնուն յաւարի. և այժմ զեղբայրն ևս նորա չարաւորն անհնարին, թերեւ և սպանեցին: Գէորգ վարդապետն, որ պատրիարքն էր կոստանդնուպոլսոյ, անկաւ, և արդ նստի նալոլլու յակոր վարդապետն...

Յամի 1752

յօգոստոսի 25 ըստ նորոյն

[Կ. Պոլիս]

Ամենապատիւ հայրութեանդ

Տրուպ ծառայ

Վրթանէս վղպ. Ասկէրեանց

ՃԾԹ.

Այս թուղթը կու տայ՝ իբրեւ յաւելում՝ հակիրճ ծանօթութիւններ նախընթաց մէկ երկու կարեւորագոյն վաւերագիրներուն:

Գերայրգելոյ Սքրայ Հօրդ մերոյ տեառն տեսան
Ստեփաննոսի վարդապետի

... մինչև ցարդ զղար աղասուն և սուլէյմանին սատակեցելոց ցնցիւղ չարութեան և զնասու ոչ պակասին, զի մերթ ի համախոհից և արբանեկացն նոցին, ի ձեռս անկանին, ոմանք սպաննին և ոմանք չարարին, և նոքա զորս կամին մատնեն, թէ այս ինչ մարդոյ այն ինչ գոյ, և այն ինչ մարդոյ այն ինչ, և այսպէս յամէն օր ի դուռու մընէրուն այս ինչ մարդ և այն ինչ մարդ վերցնեն առ ի քննել, և այսպէս ամենեքեան սրտադող են:

Եղադուպին եղբայրն որ իբրու երկու ամիս էր, որ ի քննութեան և ի տանջան էր, յաւուրս յայտոսիկ թող տուեալ, բայց խեղացնորեալ է ասեն, թէ ի թէքիրտաղ տարին, և ոմանք թէ ի յաքսորս ուղարկեցին: Յիզմիրու ահազին սահակ վ. եկն աստ: Ի Պոռու սայու աքսորեալքն յակոբ աղան և հաճի պետրոսն յաւուրս յայտոսիկ իթլախ եղեալ ասեն...

Յամի տեառն 1752 ին

ի պիպտեմբերի 17-ին չուէ առ վէնայով

[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ

Հ. Միքայէլ վ.

ՃԿ.

Պաշտօնովի մէջ Մխիթարեան նախկին առաքելութեան մը բացման նախապատրաստական գործողութիւնները կը պատմութիւն հետեւեալ նամակին մէջ:

Օր. եղ. Յս. Գս.

Ապրիլի 12 Պէտլիբաթըն 1753?

Գերայ Պատուվնի Հայր Սքային իմոյ հոգևոր և մարմնաւոր քաղցրօնիս
Մեծաւ խոնարհութեամբ ողջուն

Եւ ընդ սակաւ ողջունիս յայտ լիցի Գերայ Պատուվնութեան տման զի Գերհարգելի վարդապետն և հայր դազարն եղին ի Պէտլիբաթըն որպէս գրեալ էյի, և ի միասին գնացիլ ինք Գերայ Պայծար Եպիսկոպոսին մօտ, տանելով կըս զգիր մի, զոր գրեալ էր քաղաքն հասարակ Գերայ Պայծար Եպիսկոպոսին և կարդաց, զորին պատասխանեաց այսպէս. Իմացայ ըզիդդիքըն ձեր հրամանուցը, Քաղաքացոցն նայև որպէս հոս տեւսանեմ որ էլիկ իք հայ հասարակութեան կամաւն, և ոչ միայն ի կողմանէյ աշխարհաւ կանաք, այլ և քահանայից. և կու գովեմ որ ջանք կանէք այպիսի բարի բանի, ահայ ես ալ Գոնֆերմավաղ կու անեմ և կու հաստատեմ և կու շրնաֆօբեմ և կու օրհնեմ, զի աւելցի այս սուրբ կրօնը. մեծաւ սիրով ընդունեց. նայև ասաց թէյ, զատկին էտև Վիզիլաքիա պի գայ ան տեղըն և այլըն. շատ կալանի արինք. աւելի քան մէկ սահդ. գրով ոչ կարեմ գրել, քանզի շատ պի լինէր, թէ ինչ խօսակցութիւն էղիլ էյ. բայց մասնաւոր քիչմ բան պի գրեմ. այսինքն վասն ըզգովանու սէպն հրաւարյց որ տարտ ունէնան որ ըզգովաքն սօրվցնեուն, օրսվհետև ունի պարտականութիւն այս կրօնը տըղաք սօրվցնեուն: Եւ այսորիկ մեր տէր օվանէսը բէրեալ էր ըզգիր մի ներողութեան Գարմիլիզանուն գոնկրէկացիային, որ հաստատէյ մեր քաղաքըն, և այսպէս ներողութեան զըրհանքն հարկ էյ նախ տանել ար Գերայ Պայծար Եպիսկոպոսըն, որ գոնֆերմավաղ անէյ. և ետ այնորիկ կու ըսգըսին ըզգոնկրէկացիան հաստատելու անոր սէպըն. խըլկիլ էր տէր օվանէսըն ըզոյն գիրըն ար Եպիսկոպոսըն, և որ հաստատէյ, զորըն տվաւ վարդապետն Եպիսկոպոսին. կարդաց և վար զըրաւ օսգովին վրայ ըզոյն գիրըն և այսպէս ասաց թէյ այս ոչ լինի, քանզի ոչ գայ ի զըրանգիլվանիայ նոյն կարգըն, վասն որոյ ոչ կամիմ տալ թողութիւն. այլ ահայ ունիք այժմըն կրօնաւորաք; և եթէ կամիք

հաստատելու Գոնկրէկացիայ նայ թողութիւն կուտամ, և ասաց հայր դազարին թէյ, եթէ կամիք կըլաք բէրէլու և հաստատիք գոնկրէկացք և ալլաւ պի լինի հայ ազգին, և այսու անդ ծնաց նոյն գիրըն, տէր օվանէսին. դարձեալ ասաց և ըստ թէյ հարկաւոր էյ և ըստ ի կերպ ալ մշտանել սոյն կրօնիս. եթէ հընար է քանի շատ, քանզի կու ճանաչեմ որ բարի պի լինի, մանաւանդ որ տըղաքըն պի սորվին քրիստոնէական վարդապետութիւնն և ալ բարի բաներ ալ. ասոր վրայ ասի ես թէյ թազաւոր Աստուծոյ ողորմութեամբն ունին հօն ալ. միայն քիչ մըն ժամանակի էտե պի լինի. ասաց թէյ լաւ էյ. և այսպէսի մեծ գօնգուլացիայով ուրախացուց ըզմեզ: Վերջապէս ասաց հայր դազարին թէյ վասըն իմ այսինքն Գերապայծար եպիսկոպոսին սէպըն աղօթք ունին նայ և սուրբ Պատարազ մատուցանեն...:

Կու ծնամ
Նոտասդ ծառայ
Օվանէս Ոսգերիշեան

ՃԿԱ.

Մինասայ ԼՂմիամնի կաթողիկոսութեան վերջին տարւոյն մէջն ենք: Նշանակուած դէպքերու այս մանրամասնութիւնը կը պակսի Զամշեանի Պատմութեան մէջ:

Է

Գերապատիւ և Գերայարգոյ՝ գերայարգելի Տեառն Տեառն Ստեփաննոսի Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայի միաբանիցն Հայոց՝ աղջոյն կարօտանաց

... ի յԼՂմիամնէ եկն գիր առ աղէքսանդր և առ ահագին սահակ և առ գէորգ վարդապետն՝ չու առնել խաղալ գնալ ի յԼՂմիամնի. քանզի նամակ կաթողիկոսական այսպէս էր գրեալ. զձեզ յորդորեմ և հրամայեմ զալ ի սուրբ աթոռն. և եթէ պատճառս յօղեսլիք այլազգո՝ լուծեալ էք ի կարգէ ձերմէ, և արգելեալ յամենայն եկեղեցական գործոց: Սոքա արք արգոյք ի մէջ ազգին հայոց (որոց յոյսն էր միշտ ի կոստանդնուպօլիս ծալ, մանաւանդ նենգաժող գէորգն՝ որ զպատրիարքութիւնն կրկին կամէր առ ինքն ձգել), տեսեալ զայս նամակ խռովեցան յոյժ. և ի սիրտ և յօգի անհնարին վիրաւորեցան: Հնարս խնդրեցին ազատել զանձինս՝ ի պարտուց աստի յայտցանէ. և չեղև հնար. քանզի սարաֆքն միաբերան և ասեն՝ ոչ գոյ հնար. պարտ և պատշաճ է ձեզ զհրաման հայրապետին կատարել, ապա թէ ոչ ընդ բանիւ էք. և մեք ընդ ձեզ խօսիլ խղճամբ: Եւ նոքա ետուն պատասխանի, յետ զատկին կատարել զհրաման Հայրապետին... Անտանելի տառապանօք հազիւ կարացին զգէորգն վասն այժմոյս ի պուտոս յղել...:

Գրեցաւ ի կոստանդնուպօլիս
յամի տեառն 1753 ի ապրիլի 14

Նոտաստ շնչին
Աթանաս վարդապետ

ՃԿԲ.

Դրանսիւլուանիոյ Եպիսկոպոսին կոնդակին թարգմանութիւնն է, զոր ի վանս զրկեր է Հ. Ղազար՝ ըստ իւր նախընթաց մէկ անտիպ գրոյն, ուր այսպէս կ'ըսէ. « Յաւուրս այսոսիկ ընկալայ զմեծագոյն գոնտակն օրհնութեան և թողութեան շինելոյ ք զեկեղեցի և զմենաստան յերկրիս յայսմիկ ի գերապայծար Եպիսկոպոսն. զօրիւ և նակն գոնտակին յղեցոց եմ ընդ Աղաչայ Մարտիրոսին ի վանս մեր » (Գր. առ Մեղրոնեան Աբբ. յամին 1753 Մայիս 29):

Զիգիգմունդոս Անտոնիոս Սթեյքա, Պարոն դէ Սալայ, Թոյլտուութեամբ Աստուածայնով Եպիսկոպոս Տրանսիլուանիոյ, այսինքն Խոտէլայ. հախահողակ Տաճարին Ամեն. երանեալ կուսին Մարիամու Կատարագրիոյ, Աթոռանիստ Եկեղեցւոյն Ագրիոյ Կանոն.

նիկոս, Ուրբ Կանոնաց Գիտակ, Որբասնեալ Վենգափառութեանցն Կեստոռականաց և Թագաւորականաց, այժմու երկրին և վենգոյն Կառավարութեան Թագաւորականին ի Տրանսիլլանիայ մտնելիմ խորհրդակից. Սիրեցելոյ մերում ի Քրիստոս կրօնաւորի Հ. Քրիստափորեան Ղազարու՝ ի ճշնաւորական կարգէ Սրբոյն Անտոնիոսի Աբբային, ողջոյն ի Տէր և Հայրական օրհնութիւն: Խոնարհական խնդրոյդ (մեզ մատուցելոյ սակաւ մի յառաջ) գիրն՝ ունէր գայս ինչ, թէ ի մէջն շնորհեսցի քեզ և քոյոցդ յաշորդաբար Եղբարց՝ որք ի գիւղաքաղաքն Արմէն Եղիսաբեթուպօլիս մերոյ թեմին, ըստ խնդոյ եղեալ՝ վասն այսորիկ մեզ արարեալ աղաչանաց շրջահայեցացն նոյնոյ գիւղաքաղաքի Պետուժեանն և Հասարակութեան և քոյոցն, ուժգնութեամբ այլոց մերոց թղթոց հաւանութեան և Ներմուծական գրոց ելելոց ի վերայ այսորիկ, արդէն իսկ են, և կանոնապէս մուծեալք, զի զայն սունն որ ի նոյն գիւղաքաղաքի արդէն ընդ իշխանութեամբ ձերոյմ է, ի ձե Եկեղեցւոյ կառուցանել, զարդարել, ի նմին զՍրբազան պաշտամունս Պատարագաց և ես զայլ սովորական հանդիսութիւնս Եկեղեցւոյ կատարել, զսուրբ Հաղորդութիւնն յարամիլոյ պահել. ոչ նուազ ի տան ձերում ԳԻՎՐՈՅՍ հասարակս բանալ, և ի նոսին Մանկանց Արամանց զսկզբունս Քրիստոնէական վարուց, և զայտաքին գրոց մալկացութիւնս հրապարակաւ ուսուցանել օրինապէս մարթասշիք. զմեր իշխանութիւնս ևս ի վերայ յաւելուլ հանձնուցի: Արդ՝ մեք որ ըստ արժանապէս բանի Հովանական պաշտօնիս մերոյ յօժարապատ հաւանութեամբ յայն բերիմք, զոր ինչ Աստուածային փառացն և փրկութեան հոգւոց կարգեալ յաճուի տեսանեմք լինելոց, մտադրագոյնս խոկացեալ զարժանիթան, և զծանրութիւնս աղաչանաց քոց նախագրելոց՝ լաւ վարկաք լսելի առնել զայնոսիկ, որպէս և իսկ ուժգնութեամբ գրոցս լսելի առնեմք, զպատշաճաւոր քեզ և քոյոցդ յաշորդաբար նոյնոյ կարգի Եղբարցդ շնորհելով իշխանութեան կարողութիւն, որպէս զիշխատակեալ տունն ձեր՝ յայս վախճան կարգեալ, ի ձե Եկեղեցւոյ կառուցանել, զարդարել, ի նմին Պատարագաց նոյնիւրոյնութիւնս առնել, զՍուրբ Հաղորդութեան խորհուրդն յարաժամ՝ սակայն վայելչապէս պահել, և զայլ ամենայն եկեղեցւոյ սովորական հանդիսութիւնս կատարել. նմանապէս ի տան ձերում զգալոցս հասարակս, կամ մակացականս բանալ, և ի նոսին Մանկանց Հայոց զսկզբունս Քրիստոնէական վարուց, այլ և զարտաքին գրոց մակացութիւնս հրապարակաւ ուսուցանել՝ ազատօրէն և օրինապէս կարասշիք և մարթասշիք: Սակայն կամիմք, և սուտգիւ պատուիրեմք, զի ի նոյն այսպէս ձեացուցեալ՝ ևս և յայլ ապա՝ նորակերտ Եկեղեցւոյն, զհարողութիւն բանին Աստուծոյ, զմատակարարութիւն սուրբ Խորհրդոյն և զայլ հանդիսութիւնս Եկեղեցւականս, որք ծխակերականք են, կամ լինիցին, առնել ամենեկին մի համարձակիցիք, եթէ ոչ ցոր վայր և յորժան ի ձեռն նոյն գիւղաքաղաքի կարգեալ ժողովրդապետին այսուհետեւ կայցեք ի վերայ իշխանութեան: Դարձեալ կամիմք և բացորոշեմք, զի այնք, որպէս ի վերայ դնի, ձեռք բանալի դպրոցք և ուսումնարանք՝ նոյն գիւղաքաղաքի կարգեալ Գահերիցուն, կամ ժողովրդապետի տեղւոյն ենթարկեցնել միշտ և ամենեկին յամենայնի վերատեսչութեանն, այցադարութեանն և ուղղաւորութեանն: Իսկ զօրհնութիւնն նոյնոյ այսպէս ձեացուցանելի Եկեղեցւոյ ձերոյ, Պատուաւոր Տեառն Միքայելի Գահիէ՝ Գահակալ եկեղեցւոյն մերոյ Աբբայու Կանոնիկոսին, և բազմապէս ասացեալ նոյն գիւղաքաղաքի Գահերիցուն և ժողովրդապետին յանձն առնեմք: Տեսեալ եղև զիրս յԱմբոյցի մերում Ավինիկիոյ՝ յաւուր երեսներորդի առաջնորդի ամսոյն Յուլիսի, յամին Տեառն ՌԶԵԳԻՆ

Ջիզիգմունդոս Անտոնիոս
Եպս. Տրանսիլլանիոյ

Առ հրամանսն իւրոյ Եպիսկոպոսականի գերաբարձրութեանն
Անտոնիոս Շերետացի ստորագրեցի.
Վերոյասացելոյ Գերաբարձրութեանն իւրոյ
Մատարանապետ գրեցի

ԿԵԻՔ

(Շարունակելի)

Հ. ՂԵՆԴՆ ՏԵՍԵԱՆ